ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ 2

ք. Երևան **03 փետրվարի 2025 թվական**

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, ով գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա և «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրեն Ալինա Ավետիսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի, նշված որոշմամբ հաստատված Հավելված N 5-ի Աղյուսակ 7-ի, «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 13-րդ և 14-րդ կետերի պահանջները, նշված որոշմամբ հաստատված Հավելված N 9-ում սահմանված ծրագրի իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Հոդված 1. Պայմանագրում օգտագործված հասկացություններ

1.1. Սույն պայմանագրում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

1) **պատվիրատու՝** ՀՀ պետական եկամուտների կոմիտե.

2) **կատարող՝** «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

3) **պայմանագրի կողմեր՝** ՀՀ պետական եկամուտների կոմիտե և «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

4) **պայմանագրի կողմ՝** ՀՀ պետական եկամուտների կոմիտե և «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, ինչպես կբխի պայմանագրի համատեքստից.

5) **երրորդ անձ՝** ՀՀ ֆինանսների նախարարություն.

6) **ծրագիր՝** ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշմամբ հաստատված հավելված N 9-ում սահմանված միջոցառումների ծրագիր, որի ընդհանուր բնութագիրը տրված է պայմանագրին կից հավելված N 1-ում.

7) **միջոցառումների տեխնիկական բնութագիր՝** ծրագրով սահմանված և կատարողի կողմից պատվիրատուի և երրորդ անձի համար իրականացման ենթակա պայմանագրին կից հավելված N 2-ում և հավելված N 2.1-ում նախատեսված միջոցառումների ամբողջական նկարագրություն.

8) **պայմանագրի գին՝** կատարողին ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման համար պատվիրատուի կողմից հատկացվող գումար.

9) **ծրագրով սահմանված միջոցառումների արդյունք ստացող՝** պատվիրատու և երրորդ անձ.

10) **եռամսյակային հաշվետվություն՝** ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման վերաբերյալ կատարողի կողմից յուրաքանչյուր եռամսյակ պատվիրատուին ներկայացվող փաստաթուղթ.

11) **Արձանագրություն (Հանձնման ընդունման ակտ)՝** պայմանագրի կնքումից հետո կողմերի կողմից նախապես որոշված և կատարողի կողմից յուրաքանչյուր եռամսյակ հաշվետվության հետ միասին պատվիրատուին ներկայացվող փաստաթուղթ, որի՝ կողմերի կողմից ստորագրմամբ հաստատվում է եռամսյակային հաշվետվության հիման վրա ծրագրով սահմանված միջոցառումը կատարված և ընդունված լինելու փաստը.

12) **ամփոփ հաշվետվություն՝** ծրագրով սահմանված իրականացված միջոցառումների ավարտից հետո դրանց վերաբերյալ պատվիրատուին ներկայացվող ամփոփ փաստաթուղթ.

13) **տարի՝** 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

14) **ամսի և օր՝** օրացույցային ամիս և օրացույցային օր, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

Հոդված 2. Պայմանագրի առարկան

2.1. Կատարողը պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով պատվիրատուի և երրորդ անձի համար նրանցից յուրաքանչյուրի մասով իրականացնել ծրագրով և տեխնիկական բնութագրով սահմանված միջոցառումները, իսկ պատվիրատուն պարտավորվում է իրականացվող միջոցառումների համար պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով կատարողին հատկացնել գումար:

Հոդված 3. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

3.1. Պատվիրատուն իրավունք ունի.

3.1.1.պայմանագրի գործողության ընթացքում ստուգել կատարողի կողմից ծրագրով սահմանված միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությունը.

3.1.2. կատարողի կողմից իրականացված միջոցառումները պայմանագրին կից հավելված N 1-ին, հավելված N 2-ին և հավելված N 2.1-ին չհամապատասխանելու դեպքում չընդունել (սույն պայմանագրով ամրագրված ընդունման համար նախատեսված ընթացակարգով)՝ սահմանելով թերությունների անհատույց վերացման 20 օրից ոչ պակաս ողջամիտ ժամկետ և կատարողից պահանջել վճարելու պայմանագրի 6.2. կետով նախատեսված տուգանքը.

3.1.3. կատարողին առանց ծրագրով սահմանված միջոցառումների համար պայմանագրով սահմանված գումարը հատկացնելու՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասը, եթե՝

ա) կատարողը ժամանակին չի սկսում ծրագրով սահմանված միջոցառումների իրականացումը, կամ ծրագրով սահմանված միջոցառումներն իրականացնելիս ակնհայտ է դառնում, որ դրանք սահմանված վերջնաժամկետում չեն իրականացվելու, բայցառությամբ այն դեպքերի, եթե դրանց կատարումը և ավարտին հասցնելը դուրս է Կատարողի կողմից իրականացվող գործողությունների շրջանակից, կամ ավարտին հասցնելը կախված է այլ անձի կողմից կատարվող գործողություններից, որոնք պատշաճ չեն կատարվել:

բ) իրականացված միջոցառումները չեն համապատասխանում պայմանագրին կից հավելված N 1-ով, հավելված N 2-ով և հավելված N 2.1-ով նախատեսված միջոցառումներին,

3.1.4. պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով լուծվելու դեպքում պահանջել իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

3.2. Պատվիրատուն պարտավոր է.

3.2.1. ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման համար և դրանց շրջանակներում կատարողին ցուցաբերել անհրաժեշտ աջակցություն, այդ թվում նյութատեխնիկական.

3.2.2. կատարողի կողմից յուրաքանչյուր եռամսյակ ներկայացվող հաշվետվության և արձանագրության վերաբերյալ որոշում ընդունել պայմանագրի 4.3. կետում նշված ժամկետում.

3.2.3. եթե ներկայացված հաշվետվությամբ ծրագրով սահմանված և իրականացված միջոցառումները համապատասխանում են պայմանագրին կից հավելված N 1-ով, հավելված N 2-ով և հավելված N 2.1-ով սահմանված պայմաններն, ապա ընդունել հաշվետվությունը և արձանագրությունը:

3.3. Կատարողն իրավունք ունի.

3.3.1. պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով հատկացվող պայմանագրի գինը, իսկ պատվիրատուի կողմից պայմանագրի 5.2. կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը.

3.3.2. պայմանագրի շրջանակներում ստանալ անարգել և ազատ հասանելիություն պատվիրատուի և երրորդ անձի սերվերային հանգույցներին ու տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգերին, ինչպես նաև պատվիրատուի և երրորդ անձի տարբեր ստորաբաժանումներից ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, այդ թվում պարզաբանումներ.

3.3.3. պատվիրատուի կողմից պայմանագիրը գինը չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

3.4. Կատարողը պարտավոր է.

3.4.1. պայմանագրով հատկացվող գումարներն օգտագործել ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման նպատակներով.

3.4.2. կատարել պատվիրատուի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

3.4.3. յուրաքանչյուր եռամսյակի համար պատվիրատուի և երրորդ անձի մասով պատվիրատուին ներկայացնել ծրագրով սահմանված և իրականացված միջոցառումների վերաբերյալ հաշվետվություն, իսկ դրա պատճենը՝ երրորդ անձին.

3.4.4. պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրով սահմանված միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պատվիրատուի հնարավորությունը՝ նրա կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

3.4.5. ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման ընթացքում պատվիրատուի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու, ինչպես նաև եռամսյակային հաշվետվությունները պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում անհատույց վերացնել արձանագրված անհամապատասխանությունը.

3.4.6. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան.

3.4.7. ծրագրով սահմանված միջոցառումները կատարել՝ չխախտելով երրորդ անձանց իրավունքները.

3.4.8. ծրագրի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել ամփոփ հաշվետվություն, իսկ դրա պատճենը՝ երրորդ անձին.

3.4.9. ծրագրով սահմանված միջոցառումների իրականացումը չվերապահել երրորդ անձանց.

3.4.10. ծրագրով սահմանված միջոցառումներն իրականացնել և ավարտել մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը.

3.4.11. պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2. և 6.3. կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

Հոդված 4. Ծրագրով սահմանված միջոցառման հանձնում-ընդունումը

4.1. Կատարողի կողմից ծրագրով իրականացված միջոցառումներն ընդունվում են նրա կողմից պատվիրատուի և երրորդ անձի մասով պատվիրատուին ներկայացված եռամսյակային հաշվետվության և արձանագրության հիման վրա:

4.2. Կատարողի կողմից ծրագրով իրականացված միջոցառումների վերաբերյալ եռամսյակային հաշվետվությունը և արձանագրությունը պատվիրատուին, իսկ դրանց պատճենը երրորդ անձին պետք է ներկայացվի յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում:

4.3. Երրորդ անձը ծրագրով իրականացված միջոցառումների վերաբերյալ եռամսյակային հաշվետվության և արձանագրության պատճենը կատարողի կողմից ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 օրվա ընթացքում պատվիրատուին պետք է հայտնի դիրքորոշում հաշվետվությամբ և արձանագրությամբ ներկայացված միջոցառումների իրականացման և դրանց՝ սույն պայմանագրի պահանջներին և պայմաններին համապատասխանության վերաբերյալ: Սույն կետով նախատեսված հաշվետվության և արձանագրության վերաբերյալ երրորդ անձի և պատվիրատուի առարկությունների բացակայության դեպքում պատվիրատուն հաշվետվությունը և արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրվա ընթացքում ստորագրում և կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված արձանագրությունը:

4.4. Եթե ծրագրով սահմանված և իրականացված միջոցառումները չեն համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա պատվիրատուն չի ստորագրում արձանագրությունը և պայմանագրի 4.3. կետով սահմանված ժամկետում կատարողին հետ է վերադարձնում հաշվետվությունը և արձանագրությունը՝ մանրամասն պատճառաբանելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունը:

4.5. Եթե պայմանագրի 4.3. կետով սահմանված ժամկետում պատվիրատուն չի ընդունում ներկայացված հաշվետվությունը և արձանագրությունը կամ պայմանագրի 4.4. կետով սահմանված կարգով չի մերժում դրա ընդունումը, ապա ծրագրով իրականացված միջոցառումները համարվում է ընդունված և պայմանագրի 4.3. կետով սահմանված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը պատվիրատուն կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված արձանագրությունը:

Հոդված 5. Պայմանագրի գինը

5.1. Կատարողին ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման համար պատվիրատուի կողմից հատկացվող պայմանագրի գինը կազմում է 1,087,667.9 հազար ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

5.2. Կատարողին ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման համար պատվիրատուի կողմից պայմանագրի գնից հատկացումները կատարվում են եռամսյակային համամասնություններին համապատասխան՝ ամսական կտրվածքով՝ ոչ ուշ, քան տվյալ ամսվա 20-ը ներառյալիետևյալ չափով՝

հազար դրամ

ծախսային հոդված	*առաջին եռամսյակ*	*առաջին կիսամյակ*	*ինն ամիս*	*տարի*
ընթացիկ ծախս	271,917.0	543,834.0	815,750.9	1,087,667.9

2025 թվականի հունվար ամսվա համար գումարը փոխանցվում է սույն պայամանագիրը երկկողմանի ստորագրելուց հետո 3 օրվա ընթացքում:

5.3. Պայմանագրի գինը կայուն է և կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ պատվիրատուն նվազեցնելու այդ գինը՝ բացառությամբ պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

5.4. Կատարողին ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման համար պատվիրատուի կողմից պայմանագրի գնից հատկացումները կատարվում են անկանխիկ եղանակով՝ կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

5.5. ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետի համաձայն ծրագրով սահմանված միջոցառումները պատվիրատուի կողմից ընդունվելուց հետո կատարողի կողմից ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) նրա կողմից պետք է վերադարձվեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը ներառյալ:

Հոդված 6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կատարողը պատասխանատվություն է կրում ծրագրով սահմանված միջոցառումների՝ պայմանագրի պայմաններին համապատասխան իրականացնելու համար:

6.2. Կատարողի կողմից պայմանագրին կից հավելված N 1-ին, հավելված N 2-ին և հավելված N 2.1-ին չհամապատասխանող միջոցառում իրականացման դեպքում նրանից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնից կատարողին հատկացման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

6.3. Կատարողի կողմից ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման վերջնաժամկետի խախտման դեպքում նրանից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնից կատարողին հատկացման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4. Պատվիրատուի կողմից պայմանագրի 6.2. և 6.3. կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման համար պայմանագրի գնից կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.2. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ պայմանագրի գնից կատարողին հատկացման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.3. կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում յուրաքանչյուր ուշացրած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ պայմանագրի գնից կատարողին հատկացման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.7. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

Հոդված 7. Տեղեկատվության գաղտնիություն

7.1. Պատվիրատուն և կատարողը պարտավորվում են գաղտնի պահել և առանց մյուս կողմի գրավոր համաձայնության երրորդ անձանց որևէ ձևով չհրապարակել (չբացահայտել) պայմանագրի որևէ պայմանի մասին տեղեկատվություն, այդ թվում՝ այնպիսի տեղեկատվություն, որն ուղղակի կամ անուղղակի տրամադրվել է մյուս կողմի կողմից և կապված պայմանագրի հետ, անկախ նրանից՝ այդ տեղեկատվությունը տրամադրվել է նախքան, ընթացքում, թե պայմանագրի լուծումից հետո:

7.2. Կողմերից յուրաքանչյուրը կարող է երրորդ անձանց տրամադրել պայմանագրի 7.1. կետով նախատեսված տեղեկատվությունն այն չափով, որ չափով դա պահանջվում է տեղեկատվություն տրամադրած կողմի կողմից պայմանագրով ստանձնած իր պարտավորության պատշաճ կատարման համար:

7.3. Պայմանագրի 7.2. կետով նախատեսված դեպքում տեղեկատվություն տրամադրած կողմը պետք է ձեռնարկի ողջամիտ միջոցներ երրորդ անձանց ոչ անհրաժեշտ տեղեկատվություն հաղորդելուց խուսափելու, ինչպես նաև երրորդ անձանց տրամադրված տեղեկատվության գաղտնիությունը նրանց կողմից ապահովելու նպատակով, ինչպես որ պայմանագրի 7.1. կետի համաձայն դա կաներ տեղեկատվություն տրամադրած կողմը:

7.4. Կողմերից յուրաքանչյուրն իրավասու է մյուս կողմի կողմից տրամադրված տեղեկությունն օգտագործել բացառապես պայմանագրով ստանձնած իր պարտավորությունը պատշաճ կատարելու համար:

7.5. Կողմերի կողմից պայմանագրի 7-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունը չպետք է կիրառվի այն տեղեկատվության նկատմամբ, երբ՝ 1) տեղեկատվության տրամադրման պահին կամ հետագայում այն հանրությանը հայտնի է դարձել կամ դառնում ոչ կողմերից մեկի մեղքով. 2) եթե համապատասխան կողմն ապացուցում է, որ տեղեկատվության հրապարակման (բացահայտման) պահին այն արդեն եղել է երրորդ անձանց տիրապետության ներքո, և այն ուղղակի կամ անուղղակի կերպով ի սկզբանե չի տրամադրվել այդ կողմի կողմից. 3) մյուս կողմին տեղեկատվությունը հասանելի է դառնում երրորդ անձանց կողմից ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերով, որը տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու պարտականություն չի կրում. 4) տեղեկատվությունը երրորդ անձանց տրամադրվել է մյուս կողմի համաձայնությամբ:

7.6. Պայմանագրի գործողության ընթացքում կողմերն իրավունք չունեն փոփոխել կամ հրաժարվել տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու նպատակով պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունը պատշաճ կատարելուց:

7.7. Կողմերը պարտավորվում են պայմանագրի 7-րդ հոդվածով ստանձնած իրենց պարտավորությունը կատարել պայմանագրի գործողության ընթացքում և դրա ավարտից հետո 2 (երկու) տարվա ընթացքում:

7.8. Կողմը, որը չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում պայմանագրի 7-րդ հոդվածով ստանձնած տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու իր պարտավորությունը, և որի հետևանքով մյուս կողմը կրում է վնաս, ապա այդ կողմն իրավունք ունի մյուս կողմից պահանջել հատուցելու սույն հոդվածով ստանձնած պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով իրեն պատճառված վնասը:

7.9. Պայմանագրի 7-րդ հոդվածով նախատեսված պահանջները չեն տարածվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում, կարգով և ժամկետում պետական և տեղական ինքնակառավարման իրավասու մարմինների կողմից հայցված և նրանց տրամադրված տեղեկատվության վրա: Կողմերը պարտավորվում են պետական և տեղական ինքնակառավարման իրավասու մարմինների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պայմանագրի իմաստով գաղտնի համարվող տեղեկատվություն ներկայացնելու դեպքում, անհապաղ, բայց ոչ ուշ քան 24 (քսանչորս) ժամվա ընթացքում մյուս կողմին տեղյակ պահել ստացված պահանջի վերաբերյալ:

7.10. Պայմանագրի 7-րդ հոդվածով նախատեսված պահանջների խախտմամբ գաղտնի տեղեկատվությունը հրապարակելու համար կողմերը պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 8. Ֆորս-մաժոր

8.1. Ֆորս-մաժոր նշանակում է որևէ անհաղթահարելի կամ անկանխատեսելի իրադարձություն (դեպք), որը դուրս է պատվիրատուի և կատարողի ողջամիտ վերահսկողությունից և որը անխուսափելի է ու անկանխատեսելի՝ անկախ կողմերի ձեռնարկած ողջամիտ ջանքերից և որը, առանց սահմանափակման, ներառում է հետևյալ իրադարձությունները (դեպքերը)՝ 1) հայտարարված կամ հայտարարված պատերազմ, ռազմական կամ պատերազմական գործողություն, շրջափակում, այդ թվում՝ ներխուժում, օտարերկրյա թշնամու գործողություն, քաղաքացիական պատերազմ. 2) ապստամբություն, հեղաշրջում, ներքին խռովություն, հասարակական անկարգություն, ահաբեկչական գործողություն. 3) առգրավում, ազգայնացում, մոբիլիզացում, հարկադիր զավթում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որոշում, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի որևէ գործողություն կամ անգործություն. 4) գործադուլ, սաբոտաժ, էմբարգո, հաղորդակցության միջոցների սահմանափակում, համաճարակ, կարանտին. 5) երկրաշարժ, սողանք, հրաբուխ, հրդեհ, ջրհեղեղ, աղետաբեր ալիք, թայֆուն, փոթորիկ կամ ցիկլոն, պտտահողմ, կայծակ կամ այլ խիստ եղանակային պայմաններ, միջուկային և ճնշման ալիքներ կամ այլ բնական կամ ֆիզիկական աղետներ:

8.2. Եթե կողմերից որևէ մեկն ամբողջությամբ կամ մասնակի չի կարողանում կատարել պայմանագրով ստանձնած իր պարտավորությունը պայմանագրի 8.1. կետով նախատեսված իրադարձություններից (դեպքերից) մեկի և (կամ) մի քանիսի պատճառով, ապա այդ դեպքում համապատասխան կողմը պարտավոր է մյուս կողմին գրավոր ծանուցել այդ իրադարձության

(դեպքի) մասին՝ իրադարձությունը (դեպքը) տեղի ունենալուց հետո 14 (տասնչորս) օրվա ընթացքում՝ նկարագրելով իրադարձությունը (դեպքը) և կցելով իրադարձությունը (դեպքը) տեղի ունեցած լինելու վերաբերյալ ապացույց:

8.3. Եթե կողմերից որևէ մեկը պայմանագրի 8.2. կետով սահմանված ժամկետում և կարգով մյուս կողմին գրավոր չի ծանուցում պայմանագրի 8.2. կետով նախատեսված իրադարձություններից (դեպքերից) մեկը և (կամ) մի քանիսը տեղի ունեցած լինելու մասին, ապա այդ կողմը հետագայում չի կարող վկայակոչել, որ պայմանագրով ստանձնած իր պարտավորության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է եղել ֆորս-մաժորի, ինչպես նաև զրկվում է մյուս կողմին հետագայում որևէ պահանջ կամ առարկություն ներկայացնելու իրավունքից:

8.4. Պայմանագրի 8.2. կետով նախատեսված ժամկետում և կարգով գրավոր ծանուցում տված կողմը ազատվում է պայմանագրով ստանձնած իր պարտավորությունը կատարելուց, ինչպես նաև այդ պարտավորությունը չկատարելու համար պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվությունից այնքան ժամանակ, քանի դեռ առկա են և շարունակվում են պայմանագրի 8.1. կետով նախատեսված իրադարձություններից (դեպքերից) մեկը և (կամ) մի քանիսը և այն չափով, որքանով այդ իրադարձություններից (դեպքերից) մեկը և (կամ) մի քանիսը խոչընդոտում են այդ կողմի կողմից պայմանագրով ստանձնած իր պարտավորության կատարմանը:

8.5. Պայմանագրի 8.1. կետով նախատեսված իրադարձություններից (դեպքերից) մեկի և (կամ) մի քանիսի առկայության դեպքում կողմերը պետք է գործադրեն բոլոր ողջամիտ ջանքերը՝ մեղմացնելու այդ իրադարձություններից (դեպքերից) մեկի և (կամ) մի քանիսի ազդեցությունը կողմերի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորության կատարման վրա և պետք է գործադրեն բոլոր ջանքերը պայմանագրով ստանձնած իրենց պարտավորությունը կատարելու ուղղությամբ, սակայն առանց սահմանափակելու պայմանագրով սահմանված կարգով և դեպքում պայմանագիրը լուծելու կողմերից որևէ մեկի իրավունքը:

8.6. Պայմանագրի 8.1. կետով նախատեսված իրադարձություններից (դեպքերից) մեկի և (կամ) մի քանիսի առկայության պատճառով կողմերից որևէ մեկի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը չպետք է՝ 1) հանգեցնի պայմանագրի ձախողման և (կամ) խախտման. 2) կողմերից որևէ մեկի համար առաջացնի վնասներ կամ լրացուցիչ ծախսեր, այն չափով, որ չափով որ կողմերի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորության չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը պայմանագրի 8.1. կետով նախատեսված իրադարձություններից (դեպքերից) մեկի և (կամ) մի քանիսի առկայության հետևանք է:

8.7. Եթե պայմանագրի 8.1. կետով նախատեսված իրադարձություններից (դեպքերից) մեկով և (կամ) մի քանիսով պայմանագրի կատարումը կասեցվում է 3 (երեք) ամիս անընդմեջ ժամանակահատվածով կամ ընդհանուր 6 (վեց) ամիս պայմանագրի կատարման ընթացքում, ապա կողմերը պարտավորվում են գտնել փոխադարձ բավարարող լուծում, իսկ փոխադարձ բավարարող լուծում չգտնելու դեպքում կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ գրավոր ծանուցելով այդ մասին մյուս կողմին՝ նշելով պայմանագրի լուծման հիմքը:

8.8. Պայմանագրի 8.1. կետով նախատեսված իրադարձություններից (դեպքերից) մեկի և (կամ) մի քանիսի առկայությունը որոշելիս պայմանագրի 8.1. կետով նախատեսված իրադարձություններից (դեպքերից) մեկի և (կամ) մի քանիսի առկայության և տևողության վերաբերյալ բավարար ապացույց է համարվում առևտրաարդյունաբերական պալատի կողմից

տրված տեղեկանքը (հավաստագիրը), որտեղ իրադարձություններից (դեպքերից) մեկը և (կամ) մի քանիսը տեղի են ունեցել:

Հոդված 9. Ժամկետի երկարաձգում

9.1. Պայմանագրին կից հավելված N 1-ով նախատեսված ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման վերջնաժամկետը կարող է երկարաձգվել այնպիսի ժամկետով, որը արդար, ողջամիտ և հիմնավոր կլինի բոլոր հանգամանքներում և ողջամտորեն ու արդարացիորեն կարտացոլի կատարողի կողմից կրած ուշացումը կամ խոչընդոտ, եթե կատարողի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորության կատարմանն ուշացնում կամ խոչընդոտում են, սակայն առանց սահմանափակման, հետևյալ պատճառներից որևէ մեկը՝ 1) պայմանագրում կատարվել են այնպիսի փոփոխություններ որոնք ազդում են ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման վերջնաժամկետի վրա, կամ 2) ֆորս-մաժորի ազդեցության որևէ դրսևորում, կամ 3) պատվիրատուի կողմից պայմանագրի 10-րդ հոդվածի համաձայն տրված կասեցման կարգադրություն կամ առաջընթացի տեմպի կրճատում, կամ 4) պատվիրատուի կողմից պայմանագրի չկատարում կամ ոչ պատշաճ կատարում կամ պատվիրատուի կողմից ներգրավված այլ անձանց կողմից որևէ գործողություն կամ անգործություն, կամ 5) պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպք:

9.2. Բացառությամբ այն դեպքերի, երբ պայմանագրում այլ բան է նախատեսված, կատարողը պետք է դեպքը կամ հանգամանքը ծագելուց հետո պատվիրատուին գործնականում որքան հնարավոր է արագ ներկայացնի ժամկետի երկարաձգման մասին պահանջ՝ դեպքի կամ հանգամանքի մանրամասն նկարագրությամբ: Պատվիրատուն ժամկետի երկարաձգման մասին պահանջը դեպքի կամ հանգամանքի մանրամասն նկարագրության հետ միասին ստանալուց հետո որքան հնարավոր է շուտ պետք է կատարողի հետ միասին համաձայնության գա ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման վերջնաժամկետի երկարաձգման վերաբերյալ:

9.3. Կատարողը պետք է մշտապես ձեռնարկի պայմանագրով ստանձնած իր պարտավորության կատարման ուշացումը հաղթահարելու կամ նվազեցնելու ուղղությամբ ողջամիտ միջոցներ: Բոլոր դեպքերում, եթե կատարողի կողմից պատվիրատուին ներկայացվել է ժամկետի երկարաձգման մասին պահանջ, ապա կողմերը պետք է քննարկեն, որպեսզի որոշեն փաստացի կամ կանխատեսվող ուշացումը հաղթահարելու կամ նվազագույնի հասցնելու քայլերը: Կատարողը պետք է կատարի պատվիրատուի կողմից տրված այդպիսի ուշացումը հաղթահարելու կամ նվազեցնելու նպատակով բոլոր ողջամիտ հրահանգները: Եթե կատարողի համար այդպիսի հրահանգների կատարումը կառաջացնի լրացուցիչ ծախսեր և կատարողն իրավունք կունենա ժամկետը երկարաձգել պայմանագրի 9.1. կետի համաձայն, ապա այդպիսի լրացուցիչ ծախսերը պետք է ավելացվեն պայմանագրի գնին:

Հոդված 10. Պայմանագրի կասեցում

10.1. Պատվիրատուն կարող է գրավոր ծանուցել կատարողին և կարգադրել կասեցնելու կատարողի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորության կատարումը: Ծանուցման

մեջ պետք է նշվեն, թե որ պարտավորության կատարումն է կասեցվելու, ինչպես նաև կասեցման ամսաթիվը և հիմնավոր պատճառները: Կատարողը պետք է ծանուցման հիման վրա կասեցնի այդպիսի պարտավորության կատարումը:

10.2. Եթե պատվիրատուի կողմից տրված կասեցման մասին ծանուցման պատճառով, որը կապված չէ կատարողի կողմից պայմանագրով ստանձնած իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետ, կատարողի պարտավորության կատարումը կասեցված է ավելի քան 60 (վաթսուն) օր, ապա ցանկացած ժամանակ դրանից հետո և պայմանով, որ այդ կատարումը դեռևս կասեցված է, կատարողը կարող է գրավոր ծանուցում ներկայացնել պատվիրատուին՝ պահանջելով, որ ծանուցումը ստանալուց հետո 10 (տասը) օրվա ընթացքում կարգադրել վերսկսելու պարտավորության կատարումը կամ պահանջել պայմանագրում կատարելու համապատասխան փոփոխություն՝ փոփոխելով կասեցված պարտավորության մասին պայմանագրի դրույթը: Եթե պատվիրատուին չի հաջողվում այդպիսի ժամկետում ներկայացնել կասեցված պարտավորության կատարումը վերսկսելու մասին գրավոր ծանուցում, ապա Մատակարարը, Պատվիրատուին ծանուցելով, կարող է կասեցումը մեկնաբանել հետևյալ կերպ՝ 1) եթե կասեցված պարտավորությունը վերաբերում է պայմանագրի առանձին պայմաններին, ապա փոփոխել այդ պայմանները, կամ 2) եթե կասեցված պարտավորությունը վերաբերում է ամբողջ պայմանագրին, ապա լուծել պայմանագիրը, պայմանով, որ առկա խնդիրը հնարավոր չէ լուծել պայմանագրում փոփոխություն կատարելու միջոցով:

10.3. Եթե՝ պատվիրատուն սահմանված ժամկետում կատարողին չի հատկացնում պայմանագրով վճարման ենթակա որևէ գումար, առանց հիմնավորման չի հաստատում որևէ հաշիվ-ապրանքագիր կամ կատարում է պայմանագրով ստանձնած իր որևէ պարտավորության խախտում, ապա կատարողը կարող է գրավոր ծանուցել պատվիրատուին՝ ներկայացնելով այդպիսի գումարը վճարելու, ինչպես նաև այդպիսի հաշիվ-ապրանքագիրը հաստատելու մասին պահանջ կամ խախտումը նկարագրելով՝ պատվիրատուից պահանջել վերացնելու խախտումը՝ հանգամանքներից ելնելով: Եթե կատարողի կողմից այդպիսի ծանուցում ստանալուց հետո 10 (տասը) օրվա ընթացքում պատվիրատուն չի վճարում, չի հաստատում հաշիվ-ապրանքագիրը կամ չի ներկայացնում այդպիսի հաստատումից հրաժարվելու պատճառները կամ չի վերացնում խախտումը կամ չի ձեռնարկում խախտումը վերացնելու ուղղությամբ միջոցներ, կամ կատարողը չի կարող կատարել պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները պատվիրատուին վերագրվող որևէ այլ պատճառով, ապա կատարողը կարող է պատվիրատուին 10 (տասը) օր առաջ գրավոր ծանուցելով՝ կասեցնել պայմանագրով ստանձնած իր որևէ կամ բոլոր պարտավորությունները կամ նվազեցնել առաջընթացի տեմպերը:

10.4. Եթե կատարողի կողմից պարտավորությունների կատարումը կասեցվում կամ առաջընթացի տեմպերը նվազում են պայմանագրի 10-րդ հոդվածի համաձայն, ապա այդ դեպքում ժամկետը պետք է երկարաձգվի պայմանագրի 9.1. կետի համաձայն և այդպիսի կասեցման կամ առաջընթացի տեմպերի նվազեցման հետևանքով կատարողի կողմից կրած որևէ կամ բոլոր լրացուցիչ ծախսերը նրան պետք է վճարվեն պատվիրատուի կողմից՝ բացառությամբ կասեցման կամ առաջընթացի տեմպերի նվազեցման այն դեպքերի, որոնք կատարողի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանք են:

Հոդված 11. Պահանջների (ծանուցումների) ներկայացման և վեճերի լուծման կարգ

11.1. Կողմերը պայմանագրի մեկնաբանման, կատարման, փոփոխման, լուծման, ինչպես նաև պայմանագրի հետ կապված ցանկացած հարց, տարաձայնություն կամ վեճ կարող են լուծել բանակցությունների միջոցով:

11.2. Կողմերի կողմից պայմանագրի 11.1. կետով նախատեսված պայմանագրի մեկնաբանման, կատարման, փոփոխման, լուծման, այդ թվում՝ ցանկացած այլ հարցի, տարաձայնության հետ կապված պահանջ, որն ուղղակի կամ անուղղակի կապված է պայմանագրի հետ, մյուս կողմին կարող է ներկայացնել գրավոր ձևով և կհամարվի պատշաճ կերպով հանձնված, եթե ուղարկվել է պայմանագրում նշված կողմի էլեկտրոնային փոստին կամ իրավաբանական հասցեին և (կամ) մեկ այլ հասցեին, որը կողմերը գրավոր նախապես կսահմանեն որպես պատշաճ ծանուցման հասցե:

11.3. Կողմն իր պահանջը մյուս կողմին պետք է ուղարկի այն պահից հետո 10 (տասը) օրվա ընթացքում, երբ այդ կողմն իմացել է կամ պետք է իմանար տվյալ պահանջը ներկայացնելու համար հիմք հանդիսացող հանգամանքի մասին: Սույն կետով նախատեսված ժամկետի խախտմամբ ներկայացված պահանջը ենթակա չէ դիտարկման մյուս կողմի կողմից:

11.4. Պայմանագրի 11.2. և 11.3. կետերով սահմանված կարգով և պայմանով ներկայացված պահանջին պետք է կցվի այդ պահանջը հիմնավորող ապացույց: Կողմը, որին հասցեագրված է պահանջը, պարտավոր է այն ստանալուց հետո 10 (տասը) օրվա ընթացքում իր առարկությունների, դիտողությունների կամ համաձայնության մասին գրավոր ծանուցել նման պահանջ ներկայացրած կողմին:

11.5. Պայմանագրի 11.4. կետով նախատեսված ժամկետում կողմի կողմից իր առարկության, դիտողության կամ համաձայնության մասին գրավոր ծանուցում չուղարկելը կդիտվի որպես մյուս կողմի կողմից իրեն ներկայացված պահանջի ընդունում այդ կողմի կողմից:

11.6. Կողմը, որը պահանջը մյուս կողմին ներկայացրել է պայմանագրի 11-րդ հոդվածով սահմանված կարգի խախտմամբ և (կամ) մյուս կողմը ներկայացված պահանջի վերաբերյալ իր առարկությունը կամ դիտողությունը ներկայացրել է պայմանագրի 11-րդ հոդվածով սահմանված կարգի խախտման, ապա համապատասխան կողմը հետագայում որևէ պահանջ կամ առարկություն չի կարող ներկայացնել մյուս կողմին, որը կապված է ներկայացված պահանջի հետ:

11.7. Ամենօրյա հաղորդակցությունը՝ համարվում են կողմի կողմից մյուս կողմին պատշաճ կերպով ծանուցված, եթե ուղարկվել է պայմանագրում նշված կողմի էլեկտրոնային փոստին կամ իրավաբանական հասցեին և (կամ) մեկ այլ հասցեին, որը կողմերը գրավոր նախապես կսահմանեն որպես պատշաճ ծանուցման հասցե:

11.8. Պայմանագրի 11 հոդվածով նախատեսված դրույթները գործում են այնքանով, որքան ով այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ այլ բան չի բխում տվյալ իրավահարաբերության բնույթից:

11.9. Պայմանագրի 11-րդ հոդվածով նախատեսված պայմանները կարող են կիրառվել նաև մասնակի՝ պայմանագրի մյուս հոդվածներում նախատեսված պայմանների հաշվառմամբ:

11.10. Կողմերը հայտարարում են, որ պատրաստակամ են գործադրել բոլոր հնարավոր և ողջամիտ միջոցները պայմանագրի հետ կապված վեճը և (կամ) տարաձայնությունը բանակցությունների միջոցով լուծելու: Այնուամենայնիվ, եթե կողմերի միջև առաջացած վեճը և (կամ) տարաձայնությունն այդպես էլ չեն լուծվում կամ կողմերից որևէ մեկը չի տեսնում առկա վեճը և (կամ) տարաձայնությունը բանակցությունների միջոցով լուծելու հնարավորությունը, ապա կողմերի միջև ծագած վեճը և (կամ) տարաձայնությունը ՀՀ օրենսդրության համաձայն

ենթակա է քննության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում:

11.11. Եթե կողմերից որևէ մեկն անցնում է պայմանագրի հետ կապված վեճը և (կամ) տարաձայնությունը դատական կարգով լուծելուն, ապա այդ դեպքում համարվում է, որ կողմերի միջև առկա վեճը և (կամ) տարաձայնությունը հնարավոր չի եղել լուծել բանակցությունների միջոցով:

Հոդված 12. Մեկնաբանում

12.1. Պայմանագրում, բացառությամբ այն դեպքերի, երբ բովանդակությունն այլ իմաստ կպարունակի կամ այլ բան կբխի իրավահարաբերության էությունից՝

1) մեկ սեռի իմաստով օգտագործված բառերը կներառեն նաև բոլոր սեռերը.

2) եզակին նշանակում է նաև հոգնակի, ինչպես նաև հակառակ իմաստով.

3) դրույթներ, որտեղ կան «համաձայնել», «համաձայնեցված» կամ «համաձայնություն» բառերը, պահանջվում է համաձայնությունն արձանագրել գրավոր, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ.

4) «գրված» կամ «գրավոր» նշանակում է ձեռքով գրված, տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով գրված և արձանագրված:

Հոդված 13. Պայմանագրում կատարվող փոփոխություններ և լրացումներ

13.1. Պայմանագրում կատարված ոչ մի փոփոխություն և (կամ) լրացում իրավաբանական ուժ չունեն, եթե փոփոխությունը և (կամ) լրացումը չեն արվել գրավոր, չեն թվագրվել, հստակորեն չեն առնչվում պայմանագրին:

13.2. Կողմերի կողմից պայմանագրի 13.1. կետով սահմանված կարգը չպահպանելու դեպքում պայմանագրում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումն իրավաբանական ուժ չունեն և կողմերի համար չեն առաջացնում որևէ իրավական հետևանքներ՝ բացառությամբ պայմանագրի 13.3. կետով նախատեսված հետևանքների:

13.3. Եթե կողմերը պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարել են պայմանագրի 13.1. կետով սահմանված կարգի խախտմամբ, ապա կողմերից յուրաքանչյուրը պարտավոր է մյուս կողմին վերադարձնել կատարված փոփոխության և (կամ) լրացման արդյունքում ստացածը, իսկ ստացածը վերադարձնելու անհնարինության դեպքում՝ հատուցել դրա արժեքը:

13.4. Կողմերի կողմից պայմանագրի ստորագրումից և (կամ) պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելուց հետո դրանց նախորդած բանակցությունները, նամակագրությունները և ձեռք բերված պայմանավորվածությունները, որոնք կապված են պայմանագրի ստորագրման և (կամ) պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելու հետ, համարվում են ուժը կորցրած, բացառությամբ այն դեպքերի, երբ բանակցությունները, նամակագրությունները և ձեռք բերված պայմանավորվածություններն անհրաժեշտ են պայմանագրում և (կամ) պայմանագրում կատարված փոփոխությամբ և (կամ) լրացմամբ սահմանված պայմանները և (կամ) կողմերի իրավունքները կամ պարտականությունները մեկնաբանելիս:

13.5. Ի լրումն պայմանագրի 13.4. կետի՝ պայմանագրի ստորագրումը և (կամ) պայմանագրում կատարված փոփոխությունը և (կամ) լրացումը ներառում են մինչև պայմանագրի ստորագրումը և (կամ) պայմանագրում փոփոխություն և (կամ) լրացում կատարելը կողմերի վարած բոլոր բանակցությունները, նամակագրությունները և ձեռք բերված պայմանավորվածությունները:

Հոդված 14. Եզրափակիչ դրույթներ

14.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների լրիվ ծավալով կատարումը և տարածվում է 2025 թվականի հունվարի 1-ից ծագած և կատարողի կողմից փաստացի կատարված ծառայությունների նկատմամբ: Պայմանագրի նկատմամբ կիրառելի իրավունքը Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն է:

14.2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշմամբ հաստատված ծրագիրը հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

14.3. Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է կատարողը:

14.4. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի՝ առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

14.5. Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1, N 2, N 2.1 հավելվածները պայմանագրի անբաժանելի մասն են կազմում, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

Պատվիրատու	**Կատարող**
ՀՀ պետական եկամուտների կոմիտե ք. Երևան, Մ. Խորենացի 3,7 ՀՎՀՀ 02647057 ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. ԳԵՎՈՐԳՅԱՆ /ստորագրություն/	ՀՀ ՊԵԿ «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ ք. Երևան, Ահարոնյան 12/3 Հ/Հ 900018009853 ՀՎՀՀ 01067589 «ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ-ի տնօրեն Ա. Ավետիսյան /ստորագրություն/

Հավելված N 1
2025թ. փետրվարի 03-ին
կնքված թիվ 2 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/Հ	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետ	Պահանջվող գումար հազար դրամ
1	2	3	4	5	6	7
1	Տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց հետ փոխկապակցված համակարգերի կառավարում	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց հետ փոխկապակցված համակարգերի կառավարում, այլ գերատեսչությունների (կազմակերպությունների) հետ տվյալների փոխանակում, տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց հետ փոխկապակցված համակարգերի սպասարկման հետ	Գործող և ներդրված էլեկտրոնային կառավարման համակարգերի սպասարկման հետ կապված աշխատանքների իրականացում Նախագծային ռիսկերի վերլուծություն Տեխնիկական առաջադրանքների և համակարգչային ծրագրերի մշակման, ծրագրերի փորձնական կիրառման և ներդրման հետ կապված գործառույթների իրականացում Բիզնես-գործընթացների հնարավորինս ավտոմատացում, աշխատանքների արդյունավետության բարձրացում	Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց հետ փոխկապակցված համակարգերի գործարկման ապահովում Այլ գերատեսչությունների (կազմակերպությունների) հետ տվյալների փոխանակման իրականացում և գործակցության ապահովում Տեղեկատվական տեխնոլոգիաների և դրանց հետ փոխկապակցված համակարգերի սպասարկման հետ կապված աշխատանքների	31.12.2025 թ	1,087,667.9

		կապված աշխատանքների և (կամ) գործառույթների իրականացում	Համակարգչային ցանցերի անխափան և անվտանգ աշխատանքի, առկա համակարգչային տեխնիկայի սպասարկման, ինչպես նաև գլոբալ համակարգչային ցանցի շահագործման ապահովում Տվյալների կառավարման կենտրոնների աշխատանքի կազմակերպում, կառավարում, սերվերների և այլ սարքավորումների անխափան և արդյունավետ աշխատանքի ապահովում	իրականացում		
					ԸՆԴԱՄԵՆԸ	1,087,667.9

ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար
Է. Գևորգյան

/ստորագրություն/

«ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ-ի տնօրեն
Ա. Ավետիսյան

/ստորագրություն/

Հավելված N 2
2025թ. փետրվարի 03-ին
կնքված թիվ 2 պայմանագրի

Հ/Հ	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի համար իրականացվելիք 2025 թվականի ծրագրով սահմանված միջոցառումների տեխնիկական բնութագիր
1	Ցանցային ենթակառուցվածքների կառավարման աշխատանքների իրականացնում:
2	Ֆիզիկական և վիրտուալ սերվերների կառավարում:
3	Տվյալների մշակման կենտրոնների աշխատանքի, սպասարկման և անվտանգության վերահսկում:
4	Օպերացիոն համակարգերի՝ սերվերներում և համակարգիչներում տեղադրում, կարգավորում և կառավարում:
5	Օգտագործողների քանակների, թույլտվությունների և մուտքի վերահսկողության կառավարում:
6	Կազմակերպության և Պետական եկամուտների կոմիտեի աշխատողներին տեխնիկական աջակցության տրամադրում:
7	Կազմակերպության, Պետական եկամուտների կոմիտեի համակարգերի և երրորդ կողմի ծառայությունների միջև (ոչ ծրագրային) ինտեգրման աշխատանքների իրականացնում:
8	Հակավիրուսային համակարգի ընթացիկ սպասարկում և պարբերաբար թարմացում կազմակերպության և Պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներում:
9	Ինտերնետի հասանելիության, ինտերնետի միջոցով տրամադրվող տեղեկատվական հոսքերի և էլեկտրոնային նամակագրության կարգավորում և հսկում:
10	Պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներում համակարգչային ցանցի անվտանգ և անխափան աշխատանքի ապահովում:
11	Պետական եկամուտների կոմիտեի համակարգչային ցանցում գործող ցանցային սարքավորումների տեղադրում և սպասարկում:
12	Պետական եկամուտների կոմիտեի և պետական այլ գերատեսչությունների միջև կապի ապահովում:
13	Պետական եկամուտների կոմիտեի համակարգչային ցանցում սերվերային համակարգերի տեղադրում: և սպասարկում:
14	Պետական եկամուտների կոմիտեի գործող սերվերային համակարգերի արդիականացում:
15	Պետական եկամուտների կոմիտեի գործող թվային հեռախոսակայանների սպասարկում:
16	Պետական եկամուտների կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների համակարգիչների ծրագրային փաթեթների տեղադրում և արդիականացում:
17	Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքերի տեխնիկական սպասարկում:

18	Տվյալների հենքերի ղեկավարում և սպասարկում:
19	Տվյալների արխիվացում:
20	Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական էլ.փոստի սպասարկում, զարգացում և օգտատերերի գրանցում:
21	Տաքսի ծառայության համակարգի զարգացում և կիրառական սպասարկման ապահովում:
22	ԱՀՔ նոր համակարգի զարգացում և կիրառական սպասարկման ապահովում:
23	Հայտարարագրման համակարգի զարգացում և կիրառական սպասարկման ապահովում:
24	Հաշվարկային փաստաթղթերի դուրս գրման e-invoicing համակարգի կիրառական սպասարկման ապահովում:
25	Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային file-online համակարգի կիրառական սպասարկման ապահովում:
26	Սոցիալական վճար համակարգի կիրառական սպասարկման ապահովում:
27	ՀՀ ՊԵԿ աշխատակիցներին «Հարկատու 3» համակարգի մուտքի հասանելիությունների տրամադրում, Տեսուչի կոդերի տրամադրում և ակտիվացում:
28	Էլեկտրոնային ՀԴՄ-ի և ՀԴՄ համակարգերի սպասարկման աշխատանքների ապահովում:
29	e-VAT համակարգի կիրառական սպասարկման ապահովում:
30	Հետագծելիության համակարգ և Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառություն (ԵԱՏՄ):
31	Վարչական իրավախախտումների վարույթներ համակարգի կիրառական սպասարկման ապահովում:
32	Իրավական վարույթներ համակարգի կիրառական սպասարման ապահովում:
33	Հարկման ռեժիմներ համակարգի սպասարկում:
34	Կամերալ ուսումնասիրություններ համակարգի կիրառական սպասարկման ապահովում:
35	Էլեկտրոնային դրամարկղային գիրք մոդուլի կիրառական սպասարկման ապահովում:
36	Հարկատու 3 համակարգի այլ մոդուլների սպասարկման աշխատանքների կառավարում ՊԵԿ-ՀԲՄԽԾՁԲ-23/3 պայմանագրի շրջանակում:
37	Էլեկտրոնային աշխատանքային պայմանագիր համակարգի կառավարման,ներդրման աշխատանքներ:
38	Այլ հաշվարկային փաստաթղթեր համակարգի ներդրման աշխատանքներ 28.11.2024թ .-ի ՀՀ պեկ-ԲՄԽՁԲ-24/4 պայմանագրի հիման վրա:
39	Դրոշմանիշային վճարի նոր համակարգի ներդրման աշխատանքներ:
40	Ծանուցումների կատարելագործում և sms-ների ուղարկում ծանուցման վերաբերյալ:
41	Անհուսալի հարկային պարտավորություններ ունեցող հարկ վճարողների մասով ցանկերի ստացում և գրությամբ հարկ վճարողների սպասարկման վարչության ներկայացում, համաձայն 415-Ն հրամանի և դատարանի որոշումների սոց. վճարի և

	դորշմանիշային վճարի պարտավորությունների հաշվառումից հանում, (անհուսալի, սնանկ):
42	ՊԵԿ նախագահի 17.08.2022թ.-ի 849 Ն հրամանի կիրառման ապահովում:
43	Իրավական ակտերի նախագծերի գնահատում ծրագրային իրագործելիության տեսանկյունից, համապատասխան կարծիքների և առաջարկների ներկայացում:
44	Օրենսդրական փոփոխությունների ուսումնասիրում և ՊԵԿ համակարգերի վրա ազդեցությունների գնահատում:
45	Հարկատու 4 համակարգի տեխնիկական բնութագրի կազման և գնման գործընթացի իրականացման աշխատանքներ:
46	Նոր համակարգերի ներդրման արդյունքում Պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցների տեխնիկական ուսուցում:
47	ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի և այլ պետական գերատեսչությունների հետ տվյալների փոխանակման ապահովում:
48	Ռիսկային Չափանիշների Ստուգման (ՌՉՍ) համակարգի զարգացում:
49	«Power BI» ԷԿՀ հարթակում նոր աղյուսակների և հաշվետվությունների ստեղծում և կատարելագործում:
50	DWH հարթակում նոր աղյուսակների և հաշվետվությունների ստեղծում և կատարելագործում:
51	Դրոշմանիշային վճարների զրոյացում, վերադարձների մուտքագրում:
52	Ավտոմատ կամերալ ուսումնասիրությունների ծրագրի համար տվյալների համապատասխան աղյուսակի պատրաստում:
53	Կապալառու կազմակերպության հետ տվյալների փոխանակման գործիքակազմի մշակում:
54	Տեղեկատվական համակարգերի կառավարման խորհրդի 13.10.2023թ. «Տվյալների դասակարգման մեթոդաբանության» հիման վրա տվյալների դասակարգում:
55	ՀՀ կառավարության 05.10.2017թ. N 1272-Ն և N 1292-Ն որոշումների համաձայն ՀՀ լիցենզավորող մարմինների կողմից տրամադրված, վերաձևակերպված և դադարեցված լիցենզիաների և ծանուցումների մասին ՀՀ ՊԵԿ տեղեկատվական համակարգի ներբեռնում:
56	ՀՀ Կառավարության 2009թ.մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետությունից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց ելքի համար պետական տուրքի գանձումը կազմակերպություններին պատվիրակելու կարգը հաստատելու մասին» N 268-Ն որոշման համաձայն համապատասխան տվյալների ներբեռնում ՊԵԿ տեղեկատվական համակարգ:
57	«Ստուգումների կազմակերպման էլեկտրոնային համակարգ»-ում ընթացիկ աշխատանքների ապահովում:
58	«Հարկային և մաքսային կարգապահական ռիսկերի գրանցամատյան-ում» ընթացիկ աշխատանքների ապահովում:

59	Staff.am կազմակերպությանը եռամսյակային կտրվածքով համապատասխան տեղեկատվության տրամադրում՝ ա)Կազմակերպության գործունեության ոլորտի և իր աշխատակիցների վերաբերյալ, բ)Կազմակերպության պաշտոնների և աշխատավարձերի վերաբերյալ տեղեկատվություն:
60	ՀՀ ՊԵԿ աշխատակիցներին ծրագրերի համակարգելիության հասանելիության հաշվառում:
61	ՀՀ ՊԵԿ նախագահի 10.04.2007թ. N 120-Ա հրամանով ստեղծված ԷԿՀ խորհրդի նիստերի կազմակերպում, արձանագրության կազմում:
62	Քաղ ծառայություն կոմիտեի հետ տվյալների փոխանակում:
63	Կադաստրի կոմիտեի տվյալների ստացում:
64	Տվյալների տրամադրում Տնտեսական քաղաքականության խորհրդին:
65	ՀՀ բանկերից յուրաքանչյուր հաշվեհամարի ամփոփ տվյալների ստացում:
66	Մշակված էլեկտրոնային նույնականացում <E-Identification> ՝ անձանց որոնման և նույնականացման միասնական էլ. համակարգի սպասարկում:
67	<DEUS> Տվյալների փոխանակման ունիվերսալ համակարգի սպասարկում և զարգացում:
68	Դրոշմապիտակների և դրոշմանիշերի վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի սպասարկում:
69	Վիրտուալ պահեստ էլեկտրոնային համակարգի սպասարկում:
70	ՀՀ ԱՆ պրոբացիայի ծառայությանը վերապահված ժամանակավոր պատժամիջոցների գրանցման և հսկողության էլեկտրոնային համակարգի սպասարկում:
71	ԱՊՀ երկրների միջև տվյալների փոխանակման, պահպանման էլեկտրոնային համակարգի սպասարկում
72	ՊԵԿ պաշտոնական կայքէջի սպասարկում,փոփոխությունների իրականացում:
73	ՊԵԿ կառուցվածքային ստորաբաժանումների կարիքների համար փոխհամաձայնեցված ծրագրային ապահովման մշակում:
74	ՊԵԿ պաշտոնական կայքերի նախագծում, մշակում, տեղադրում, սպասարկում և զարգացում:
75	ԵՏՄ հայտարարության տվյալների փոխանակում:
76	ՄՄԱՏՀ տեղեկատվական համակարգերի կիրառական սպասարկում:
77	Միջպետական, Պետական, Ներգերատեսչական աշխատանքային խմբերում մասնակցություն:
78	Պետական մարմիններից, ՊԵԿ ստորաբաժանումներից, ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից ստացված հարցումների պատասխանների տրամադրում:
79	Ընդհանուր գործընթաց 13 ներդրման աշխատանքներ:

80	Ուղևորային հայտարարագրի ներդրման աշխատանքներ:
81	«Թույլատվական փաստաթղթեր» համակարգի սպասարկման ապահովում:
82	ԵՏՄ անդամ պետությունների հետ տվյալների փոխանակման ապահովում:
83	Վիճակագրական վերլուծության համար տվյալների տրամադրում ըստ պահանջված ձևաչափերի:
84	ՀՀ ՊԵԿ ստորաբաժանումների և արտաքին այլ հարցումների հիման վրա տեղեկատվության տրամադրում ըստ պահանջված ձևաչափերի:
85	ԵԱՏՄ անդամ պետությունների հետ քննարկումների մասնակցություն:
86	Արհեստական բանականություն և մեքենայական ուսուցում ծրագրի ներդրման աշխատանքներ:
87	Տեղեկատվության ավտոմատ փոխանակման համակարգի ստեղծման շրջանակներում տեխնիկական բնութագրի մշակում և տրամադրում:
88	Դրոշմապիտակների e-mark համակարգ:

ՀՀ ՊԵԿ գլխավոր
քարտուղար
Է. Գևորգյան

«ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Ա. Ավետիսյան

/ստորագրություն/

/ստորագրություն/

Հավելված N 2.1
2025թ. փետրվարի 03-ին
կնքված թիվ 2 պայմանագրի

Հ/Հ	ՀՀ Ֆինանսների նախարարության համար իրականացվելիք 2025 թվականի ծրագրով սահմանված միջոցառումների տեխնիկական բնութագիր
1	Ցանցային ենթակառուցվածքների կառավարման աշխատանքների իրականացնում:
2	Ֆիզիկական և վիրտուալ սերվերների կառավարում:
3	Տվյալների մշակման կենտրոնների աշխատանքի, սպասարկման և անվտանգության վերահսկում:
4	Օպերացիոն համակարգերի՝ սերվերներում և համակարգիչներում տեղադրում, կարգավորում և կառավարում:
5	Օգտագործողների քանակների, թույլտվությունների և մուտքի վերահսկողության կառավարում:
6	Կազմակերպության և Ֆինանսների նախարարության աշխատողներին տեխնիկական աջակցության տրամադրում:
7	Կազմակերպության, Ֆինանսների նախարարության համակարգերի և երրորդ կողմի ծառայությունների միջև (ոչ ծրագրային) ինտեգրման աշխատանքների իրականացնում:
8	Հակավիրուսային համակարգի ընթացիկ սպասարկում և պարբերաբար թարմացում կազմակերպության և Ֆինանսների նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներում:
9	Ինտերնետի հասանելիության, ինտերնետի միջոցով տրամադրվող տեղեկատվական հոսքերի և էլեկտրոնային նամակագրության կարգավորում և հսկում:
10	Ֆինանսների նախարարության կառուցվածքային ստորաբաժանումներում համակարգչային ցանցի անվտանգ և անխափան աշխատանքի ապահովում:
11	Ֆինանսների նախարարության համակարգչային ցանցում գործող ցանցային սարքավորումների տեղադրում և սպասարկում:
12	Ֆինանսների նախարարության և պետական այլ գերատեսչությունների միջև կապի ապահովում:
13	Ֆինանսների նախարարության համակարգչային ցանցում սերվերային համակարգերի տեղադրում: և սպասարկում:
14	Ֆինանսների նախարարության գործող սերվերային համակարգերի արդիականացում:
15	Ֆինանսների նախարարության գործող թվային հեռախոսակայանների սպասարկում:
16	Ֆինանսների նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների համակարգիչների ծրագրային փաթեթների տեղադրում և արդիականացում:
17	Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքերի տեխնիկական սպասարկում:
18	«Ջի Սոլյուշնս» ՊՈԱԿ-ի կողմից Ֆինանսների նախարարությունից ընդունված տվյալների հենքերի ղեկավարում և սպասարկում:

19	Ֆինանսների նախարարության պաշտոնական էլ.փոստի սպասարկում, զարգացում և օգտատերերի գրանցում:
20	«Ջի Սոլյուշնս» ՊՈԱԿ-ի կողմից Ֆինանսների նախարարությունից ընդունված տեղեկատվական համակարգերի տեխնիկական սպասարկում:
21	ԿՖԿՏՀ ծրագրերի գնման գործընթացի շրջանակներում տեխնիկական բնութագրի մշակում:
22	Ֆինանսների նախարարության աշխատանքների էլեկտրոնային համակարգերի ռազմավարության մշակում:

ՀՀ ՊԵԿ գլխավոր
քարտուղար
Է. Գևորգյան

«ՋԻ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՊՈԱԿ-ի
տնօրեն
Ա. Ավետիսյան

/ստորագրություն/

/ստորագրություն/